«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ***Սովորողների քննադատական մտածողության զարգացումը պատմության ուսուցման գործընթացում***

Առարկան՝ ***Պատմություն***

Հետազոտող ուսուցիչ՝ ***Հերմիկ Ղազարյան***

Ուսումնական հաստատություն՝ ***Քաղաք Մասիս, թիվ 3 հիմնական դպրոց***

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն…….. …….. 3-7

ԳԼՈՒԽ 1. Քննադատական մտածողության ձևավորումը և զարգացումը

1.1. Քննադատական մտածողության համակարգը……... 7-14

1.2. Աշակերտների քննադատական մտածողության ձևավորման մեթոդները……....…. 15 -18

ԳԼՈՒԽ 2. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1. Պատմության դասին կիրառվող մեթոդներ և տեխնոլոգիաներ… 19-31

2.2. Դասի պլանավորում: Դասի պլանավորման սկզբունքները.....32-34

Փորձարարական դաս 1 34-37

Փորձարարական դաս 2.....37-39

Հավելված1.Դասապլան 1 40

Հավելված 2.Դասապլան 2 41-42

Հավելված 3. Դասապլան 3 .....43- 45

Եզրակացություն……46-49

Օգտագործված գրականության ցանկ …….50

«Հայտարարում ենք, որ կրթությունը մտավոր իմաստով նշանակում է շրջահայաց, զգույշ և խորաթափանց մտածելու սովորույթի ձևավորում»:

Ջոն Դյուրի

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Այն նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը և ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում: Նեղ իմաստով քննադատական մտածողությունը նշանակում է «պնդումների ճիշտ գնահատում»: Նաև բնութագրվում է որպես «մտածողություն մտածողության մասին» : Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի՝ նախքան վերջնական եզրահանգումները: Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը: Քննադատական մտածողության զարգացումը կարևորվում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդավարական արժեքների պահպանման տեսանկյունից: Նշեմ նաև, որ այն հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը և կոմպետենտ աշխատուժ է օրեցօր զարգացող աշխարհում: Չնայած այն համընդհանուր համաձայնությանը, թե որքան կարևոր է քննադատական մտածողությունը, վերջինիս միասնական սահմանում, թերևս, չկա:

Հայերենում խնդիրն առավել բարդ է, քանի որ տերմինը հայերեն է թարգմանվում անգլերենից, և գոյություն ունեցող թարգմանությունը հաճախ չի արտացոլում այն ընդգրկուն հասկացությունը, որը ներդրված է անգլերեն տերմինի մեջ: Այսպես, հայերենում «քննադատական մտածողությունը» ենթադրում է պարտադիր քննադատություն և անհամաձայնություն խնդրո առարկայի շուրջ, մինչդեռ անգլեների «critical thinking»արտահայտությունն առավել ընդգրկուն է և ենթադրում է քննողական մոտեցում, այսինքն, խնդրո առարկայի բազմակողմանի քննարկում: Հետևաբար, առավել նպատակահարմար կլիներ, եթե «critical thinking»-ը թարգմանվեր «քննողական մտածողություն»: Սակայն, շփոթության մեջ չընկնելու նպատակով, հետազոտության շրջանակներում կկիրառվի արդեն լայնորեն ընդունված «քննադատական մտածողություն»հասկացությունը՝ ապագայում այն վերանվանելու ակնկալիքով: Հետազոտական աշխատանքում ընդգծվում է աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց՝ առանձնացվում է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը : Այն կօգնի բացահայտել պատմական փաստերի ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է դպրոցում քննադատական մտածողության զարգացումը,քննադատական տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունների բացահայտումն ու հիմնավորումը՝ որպես աշակերտների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիա: Հետազոտության օբյեկտը պատմության դասերին ուսումնական գործընթացն է: Հետազոտության առարկան աշակերտների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող քննադատական մտածողության տեխնոլոգիան է : Ինչպես նաև ժամանակակից ՏՀՏ –ների և համագործակցային մեթոդների կիրառման միջոցով սովորողների մոտ ձևավորել.

- ✓ պատճառահետևանքային կապերը վերլուծելու
- ✓ փաստերն ու երևույթները գնահատելու
- ✓ մեկնաբանելու , վերլուծելու
- ✓ հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ և հմտություններ: Անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայման է, իսկ այսօրվա սովորողը խնդիր ունի
- ✓ փաստերը տարբեր տեսանկյունից դիտարկելու
- ✓ հարցեր տալու և ցանկացած հայտարարության համար ապացույցներ որոնելու
- ✓ դիրքորոշում ունենալու և սեփական դիրքորոշումը պաշտպանելու: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտություններ զարգացման շնորհիվ:

Հետազոտության խնդիրներն են՝ –

- ✓ Դիտարկել աշակերտների ճանաչողական կարողությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը պատմության դասին
- ✓ Հիմնավորել քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես ակտիվ մանկավարժական տեխնոլոգիա
- ✓ Գիտափորձով հավաստել, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան ժամանակակից կրթության մեջ արդյունավետ կիրառվող և աշակերտների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա է:

Հետազոտության արդիականությունը՝– 21-րդ դ. հմտությունների համագործակցությունը (The Partnership for 21th Century Skills) քննադատական մտածողությունը ներառել է այն հմտությունների շարքում, որոնք անհրաժեշտ են հետդպրոցական կրթության, աշխատանքային գործունեության և արդի աշխարհում հաջողելու համար: 2021 թ. փետրվարից Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ մտած Հանրակրթության պետական նոր չափորոշիչը, որը ստեղծվել է վերոնշյալ և այլ նմանատիպ փաստաթղթերը հաշվի առնելով, առանձնացնում է ութ առանցքային կոմպետեցիաներ (կարողունակություններ):

Դրանցից «սովորել սովորելու կարողունակությունը» պարունակում է հետևյալ նկարագրությունը. «սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն»[1]: Ըստ այս կարողունակությունների ձևակերպվել են նաև տարրական, հիմնական և ավագ դպրոցի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, որտեղ մի շարք առարկայական և վերառարկայական վերջնադրունքներ անմիջականորեն կապակցված են քննադատական մտածողությանը: Ուստի ինչպես յուրաքանչյուր այլ առարկայի, այնպես էլ Պատմություն առարկայի համար խիստ արդիական է այդ վերջարդյունքների ձևավորման արդյունավետ ուղիների և բազմազան հնարավորությունների որոնումը, փորձարկումը, ներդրումը՝ նպաստելով կարողունակ շրջանավարտի, անհատի և ՀՀ քաղաքացու ձևավորմանը: Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն իֆորմացիային տիրապետելըայլարժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները:

Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության (այսուհետև՝ ՔՄ) որոշակի փոխանցելի հմտություններ:

1.https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Մանկավարժական գործունեության ընթացքում իմ ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Տարվա ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:
Եթե ուզում ենք ավելի խորությամբ հասկանալ ինքներս մեզ, իրադարձությունները, պետք է կարողանանք պատմությունն անգիր անելուց անցնենք վերլուծելու: Դա մեզ մեկնաբանելու, վերլուծելու հմտությունների զարգացման հնարավորություն կտա: Բայց եթե մենք պատմությունը չկարողանանք վերլուծել, դասեր քաղելու բաղադրիչը կմնա լավ ցանկություն:21-րդ դարի ուսուցիչը պետք է կարողանա ապահովելսովորողների վերլուծելու կարողությունը և սեփական դիրքորոշումը ունենալու հմտությունը:

ԳԼՈՒԽ 1. Քննադատական մտածողության ձևավորումը և զարգացումը

1.1.Քննադատական մտածողության համակարգը

Քննադատական մտածողության հմտությունների կարևորությունը շեշտադրվում է որպես կրթության ակնկալվող վերջնարդյունք: Այս համատեքստում, երբ խոսք է գնում բարձր կարգի մտածական հմտությունների զարգացման մասին, առավել հաճախ դիտարկվող աղբյուրը Բենջամին Բլումի տաքսոնոմիան է՝ իր ավանդական կամ վերանայված տարբերակներով[1] : Դրա բաղկացուցիչ մասն է ճանաչողական (կոգնիտիվ) գործընթացների հարթությունը, որը ներկայացնում է սովորողների ճանաչողական գործընթացների համաընդգրկուն դասակարգումը՝ մտապահել, ընկալել, կիրառել, վերլուծել, գնահատել, ստեղծել մակարդակներով: Քննադատական մտածողության հմտությունների ուսուցումը 21-րդ դարի կրթության կարևոր բաղադրատարրն է: Քննադատական մտածողություն (անգլ.՝ critical thinking) ապացուցումների համակարգ, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները[2] : Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները[3] : Կա կարծիք, որ անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայմանն է:Նեղ իմաստով քննադատական մտածողություն նշանակում է պնդումների մտածված գնահատում: Ինչպես նաև մեկնաբանվում է որպես «մտածողություն մտածողության մասին» [4] : Ամենատարածված մեկնաբանություններից մեկն է՝ խելամիտ անդրադարձ (ռեֆլեքսիվ) մտածողություն, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել[5] :

1. A Taxonomy for Learning, Teaching and Assessing (A Revision of Bloom's Taxonomy of Educaional Objectives), Edited by Anderson L. W, Krathwohl D.R., New York: Addison Weslley longman, 2001, p. 6768

2–5.org hy.wikipedia

Առավել մանրամասն սահմանումն է՝ կիրառելիության, համադրման և տեղեկույթի գնահատման ակտիվ և հմուտ վերլուծության գործընթաց, հայեցակարգային ձևակերպում, որը ստացվում է ուսումնասիրություններով, փորձով, դատողություններով, հաղորդակցություններով[1] :

Քննադատական մտածողությունը կարևոր հմտություն է: Զարգացած քննադատական մտածողություն ունեցող անձը ունի հմտությունների մի ամբողջ շարք. Դրանք են՝ դիտողականությունը և իրենց տեսակետը հիմնավորելու ունակությունը, տեղեկատվության ուսումնասիրության վրա կենտրոնանալը և տարբեր իրավիճակներում վերլուծական հմտություններ կիրառելու ունակությունը: Որտե՞ղ կարող է անհրաժեշտ լինել քննադատական մտածողությունը: Ամենուր, և դա չափազանցություն չէ, քանի որ քննադատաբար մտածելու կարողությունը կարող է օգտակար լինել կյանքի ցանկացած բնագավառում՝ և՛ երեխաների, և՛ դեռահասների, և՛ մեծահասակների համար: Քննադատական մտածողություն ունեցող մարդը ունակ է.

1. հասկանալ տարբեր գաղափարների և հասկացությունների միջև տրամաբանական և պատճառահետևանքային կապերը**,**

2. արագ վերլուծել ուրիշների դատողությունները և գնահատել դրանք,

3. գրագետ ձևակերպել սեփական փաստարկները և դրանք փոխանցել ուրիշներին,

4. նշել գաղափարների կարևորությունը և համապատասխանությունը ընդհանուր համատեքստում:

Այսօր հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը, որ կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Այսօր կրթական համակարգն ունի առավել բարդ առաքելություն, այն է՝ ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն, քննադատաբար մտածելու ինչպես ակադեմիական առարկաների, այնպես էլ իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ[2]

1..org hy.wikipedia

2 Загашев И. О., Заир-Бек С. И. Критическое мышление: технология развития. – СПб : Альянс-Дельта, 2003, стр. 118

Այն հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը և կոմպետենտ աշխատուժ է օրեցօր զարգացող աշխարհում: Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

- կանխորոշում են ուսումնառության նպատակները,
- հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման,
- նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,
- նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,
- ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը:

Սուխոմլինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել [1]: Գիտելիքի և մտածողության միջև եղած կապը փորձում է բացահայտել Դայանա Հալպերնը: Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և՛ դրական, և՛ բացասական վերաբերմունք: ՔՄ-ն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը:

1. Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002. 224 с.

Նախ և առաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Իսկ կան արդյոք ապացույցներ այն մասին, որ մտածողությունը կարելի է բարելավել: Անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել ՔՄ-ը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում և գիտական տարբեր ոլորտներում: Դժվար է գտնել ՔՄ այնպիսի ոլորտ, որին հնարավոր չլինի տիրապետել [1]: Ամերիկյան քոլեջների սովորողները վկայում են, որ իրենց քննադատական մտածողության հմտությունները զգալիորեն բարելավվել են մտածողության հմտություններ սովորեցնող դասընթացներից հետո [2]: Նրանք սկսել էին ավելի բարձր գնահատել իրենց մի շարք չափանիշներով, ինչպիսիք են՝ առանց ավելորդ շտապողականության դատողություններ անել, կարողանալ գնահատել հակադիր փաստարկները, բազմակողմանիորեն գնահատել, հաշվի առնել անորոշության գործոնը: Նրանք նշել են նաև, որ խնդիրներ լուծելիս կիրառում են տարբեր էվրիստիկ մոտեցումներ, ինչպիսիք են ավելորդ փաստերի բացառումը, ինֆորմացիայի աղբյուրի հուսալիության գնահատումը: Հետազոտողները եկել են այն եզրակացության, որ գիտելիքները, որոնց ստացման ժամանակ տրվում են մտածողության ընդհանուր կանոններ, կարող են փոխադրվել նաև գործունեության այլ ոլորտներ: Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ[3]:

1.Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002. 224 с.

2.Халперн Д.Ф. Психология критического мышления. СанктПетербург. Изд.-во “Питер”. 2000. 496 с. 74

3. Block R. A. Education and thinking skills reconsidered. // American Psychologist. 1985. 40. P. 574-575.

Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամաբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման [1]: Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես «ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել»: Մեկ այլ աշխատության մեջ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ խնդրի շուրջ քննադատաբար մտածելու արդյունքում կբացահայտվի ճշմարտությունը: Հետևաբար, ընկալումը, թե որն է ճշմարտություն, մեծապես կախված է մտածողի նախապաշարմունքից և հմտություններից: Իր հերթին էլ պրոֆեսոր Ռանդի Գարիսոնը խիստ կարևորում է ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում: Նա նշում է, որ ուսուցիչը պարտավոր է աշակերտին քննարկումների միջոցով դրդել վիճարկելու տարբեր գաղափարներ, ենթադրություններ, տեսություններ, նորմեր և կանոններ, քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստաձնել գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն[2] : Ուստի պատահական չէ, որ շատ գիտնականներ պնդում են, որ ուսուցչի և աշակերտի միջև երկխոսության և քննարկման ծավալումը քննադատական մտածողության ձևավորման և զարգացման թիվ մեկ գրավականն է:
Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ ես կարևորում եմ **պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները:** Վերջիններս համարվում են «պատմական մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ [3]:

1.Лернер И. Я. Развитие мышления учащихся в процессе обучения истории. М.: Изд.-во “Просвещение”. 1982. 191 с.

2 Загашев И. О., Заир-Бек С. И. Критическое мышление: технология развития. – СПб : Альянс-Дельта, 2003, стр.5

3. http://historicalthinking.ca/historical-thinking-concepts5. Block R. A. Education and thinking skills reconsidered. // American Psychologist. 1985. 40. P. 574-575.

Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ **Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում….**: Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Նշեմ նաև, որ այս հարցադրումներին պատասխանելիս աշակերտների իրականացրած ճանաչողական գործունեությունը համապատասխանում է Բլումի [1] մշակած աստիճանային համակարգի վերին աստճաններին և ենթադրում է գնահատում, աստիճանակարգում, արժևորում: Ինչպես նաև Սանդերսի **հիշողություն–փոխակերպում-մեկնաբանում-կիրառություն-վերլուծությունհամադրում-գնահատում** համակարգում այս հարցերը դիտվում են իբրև հարցադրումների ամենաբարձր մակարդակ [2]: Մտածողությունը՝ որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Տրամաբանության մեջ հարցը ձևակերպվում է որպես որոշ ինֆորմացիայի հարցում: Այլ կերպ հարցը մեկնաբանվում է որպես խթանող նախադասություն: Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ դու աշխատում ես, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը: Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ: Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից:
Հարցը յուրատեսակ մանրադիտակ է, գիտելիքների որոշակի համակարգ, որն իր մի մասով (հարցով) բնորոշում է այն, ինչ արդեն իսկ գիտենք, և ընկած է մեր գիտելիքի հիմքում, իսկ երկրորդ մասով (պատասխան) կա որոշ չիմացություն, այսինքն՝ այն, ինչ մենք ուզում ենք իմանալ [3]:

1. http://www.nwlink.com/~donclark/hrd/bloom.html

2. https://books.google.am/books/about/Classroom_questions.html?id=- uk8AAAAYAAJ&redir_esc=y

3. Аверьянов Л. Я. Социология: искусство задавать вопросы. Издание 2-е, переработанное и дополненное. Москва. Изд.-во “Москва” 998. 195 с.

Ճանաչողության գործընթացում կարևոր է ֆիքսել այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել, բայց պետք նաև ֆիքսել այն, ինչը մենք դեռևս չգիտենք և ենթակա է պարզվելու: Այդպիսիք են հենց հարցերը:

Հարցի կառուցվածքը հասկանալու համար նախ պետք է առանձնացնել այն, ինչ մենք արդեն գիտենք: Մեր իմացածի հիման վրա էլ արդեն կարելի է ձևակերպել հարցը: Հարցը՝ որպես ճանաչողության ձև, միջոց է պարզելու անհայտը՝ հենվելով ինչ որ հայտնի փաստի վրա: Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը:

Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը: Պիտի ստեղծվի համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտելուց, գտնել օրինաչափությունները, սահմանել պատմական երևույթների ու գործընթացների բնույթն ու նշանակությունը,պատրաստ է լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ:Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ, ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ:

Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ:

1.2. Աշակերտների քննադատական մտածողության ձևավորման մեթոդներ

«Քննադատական մտածողությունը հիմնավորված, ռեֆլեկտիվ մտածողություն է, որը միտված է որոշելու, թե ինչին հավատալ կամ ինչ անել»:

Ռ.Էնիս

Մտածել քննադատորեն՝ նշանակում է լինել հետաքրքրասեր, ինքդ քեզ հարցեր տալ, համակարգված փնտրել տրված հարցերի պատասխանները, բացահայտել փաստերի պատճառներն ու հետևանքները, կասկածել ընդհանուր ընդունված ճշմարտություններին, զարգացնել սեփական տեսակետը և այն տրամաբանական փաստարկներով պաշտպանելու ունակությունը՝ուշադրություն դարձնելով հակառակորդի փաստարկներին և կարողանալ դրանք տրամաբանորեն ընկալել: Քննադատական մտածողության զարգացման մեթոդներից մեկը երկխոսության կիրառումն է: Սովորողներին սովորեցնելիս ուսուցիչը պետք է երկխոսություն զարգացնի, քանի որ դա նպաստում է քննադատական մտածողության զարգացմանը և կրթության որակի բարձրացմանը: Ուսուցիչը պետք է սովորողներին հարցեր տա՝ ինչպես նոր, այնպես էլ նախկինում ուսումնասիրված նյութը հասկանալու համար՝ դրանով իսկ նպաստելով ամբողջ դասընթացի համակարգային ձևավորմանը: Այսպիսով, ուսուցիչն օգնում է սովորողներին կապել նոր նյութը նախկինում սովորածի հետ, ըմբռնել և վերանայել իրենց սովորած տեղեկատվությունը: Բայց արդյո՞ք ցանկացած հարց է տեղին: Ի վերջո, անհրաժեշտ է ոչ միայն վերարտադրողական հետադարձ կապ, այլ երկխոսություն, որը կօգնի ավելի խորը հասկանալ ուսումնասիրվող նյութը և, հնարավոր է, նոր գիտելիքների լույսի ներքո քննադատաբար վերաբերվել նախկինում ուսումնասիրվածին: Թերևս, հարցերը պետք է ունենան այնպիսի ձև, որը կխրախուսի սովորողին վերանայել նախկինում ուսումնասիրվածը, կոնկրետացնել կամ կիրառել տեսական գիտելիքները, սովորեցնել կանխատեսել, գտնել հարաբերություններ ուսումնասիրված հասկացությունների, երևույթների կամ առարկաների միջև[1]:

1.Богатенкова Н.В., Муштавинская И.В. «Технология развития критического мышления на уроках истории и краеведения», Санкт - Петербургский университет педагогического мастерства, 2001, стр.44

Նման հարցերի մշակված համակարգի օգնությամբ անհրաժեշտ է օգնել սովորողներին քննադատաբար վերաբերվել նոր տեղեկատվությանը (և նախկինում ուսումնասիրված), ներառյալ դասագրքից կամ ուսուցիչից ստացված, և փորձել հիմնովին պարզաբանել իրավիճակը: Ուստի պետք է այնպես անել, որ աշակերտը ամեն ինչ անվերապահորեն չընդունի, այլ փորձի ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ «հասնել հատակին», այսինքն՝ ինքն իրեն և ուրիշներին այնպիսի հարցեր տա, որոնք կօգնեն կապ գտնել գոյություն ունեցող խնդրի հետ:
Այսինքն՝ անհրաժեշտ է, որ դասը վերածվի երկխոսության: Դասի յուրաքանչյուր պահի ուսուցիչը, այսպես ասած, ախտորոշում է իր զարգացման հնարավոր ուղիների ոլորտը, բացահայտում վիճակը և զարգացման միտումները:
Երկխոսությունն ամենևին չի ենթադրում սովորողի կողմից ցանկացած պահի սեփական դիրքորոշման, կարծիքի կամ տեսակետի արտահայտում: Ուսուցիչը, իր հայեցողությամբ, կարող է դասարանում որոշակի ժամանակ հատկացնել, երբ աշակերտները կարող են քննարկել, հարցեր տալ և պատասխանել դրանց:
Նաև տեսական նյութի ներկայացման ընթացքում կամ խնդրի լուծումը վերլուծելիս ուսուցիչը կարող է կարճ ժամանակահատվածում ստեղծել պրոբլեմային իրավիճակ՝ սովորողների ճանաչողական գործունեությունը ակտիվացնելու համար:
Իհարկե, դասը չպետք է լինի որոշակի հարցերի մշտական քննարկում, բայց նպատակահարմար է դասի որոշ ժամանակը օգտագործել խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակների արդյունավետ քննարկման, թույլ տված սխալների և դրանց վերացման ուղիների, էական խնդիրների և այլնի համար: Բացի այդ, ուսուցիչը կարող է իր հարցերով աշակերտների մտավոր գործունեությունը դասարանում ուղղորդել ճիշտ ուղղությամբ: Որքան բարձր է աշակերտների մտավոր գործունեության զարգացման մակարդակը, այնքան ավելի խորը և բովանդակալից են յուրացվում գիտելիքները[1] :

1. Загашев И. О., Заир-Бек С. И. Критическое мышление: технология развития. – СПб : Альянс-Дельта, 2003, стр. 98

Հարցադրումների շնորհիվ ուսուցիչները ստանում են նաև հետադարձ կապ ուսումնառության գործընթացի վերաբերյալ և «չեն կորցնում» աշակերտներին:Հետևաբար, ամփոփելով ներկայացնում ենք հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելությունները՝

- Ցույց է տալիս թեմայի տրամաբանությունն ու առաջ անցնում՝ խրախուսելով ոչ թե անգիր անելը, այլ հասկանալը
- Ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա
- Ստեղծում է փոխանցելի գիտելիք
- տալիս է ակնթարթային հետադարձ կապ (թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին) սովորելու գործընթացի վերաբերյալ
- դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին
- աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է
- աշակերտներին թույլ է տալիս գործնականում կիրառել ձեր հաղորդած և նրանց կողմից վերջերս յուրացված գաղափարներն ու բառապաշարը :
- վերհանում է սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց (այսինքն՝ ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը)
- մոտիվացնում է, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին հաջողություն գրանցել ուսումնառության ընթացքում
- անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը
- կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար
- թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը:

  Ահա հարցերի համար նախատեսված հատուկ ձևանմուշների ցանկ, որով ես օգտագործում եմ իմ ուսումնական գործունեության մեջ և դրանով իսկ նպաստում երկխոսության առաջացմանը և սովորողների ռեֆլեկտիվ, քննադատական դիրքորոշման ակտիվացմանը ուսումնական գործընթացում:

Հարցեր, որոնք ակտիվացնում են աշակերտների ռեֆլեքսիվ-քննադատական դիրքորոշումը (ըստ Դ. Ա. Ծարովի).

Ընդհանուր հարցեր	**Օգտագործվող գործառնություններ և մտածողության հմտություններ**
Բերեք օրինակ	Կոնկրետացում
Ինչպե՞ս կարելի է օգտագործել	Ընդհանրացում, առաջարկ, վերլուծություն
Ի՞նչ կլիներ, եթե…	Ենթադրություն, վարկած, տրամաբանական մտածողության ձևեր
Ի՞նչ նկատի ուներ…	Վերլուծություն, եզրահանգում
Որո՞նք են ուժեղ և թույլ կողմերը	Վերլուծություն,եզրահանգում,համեմատություն
Ինչի՞ է նման…	Նույնականացում, բացահայտու
Ի՞նչ կարող ենք իմանալ /հասկանալ/	Նախկինում ձեռք բերված գիտելիքների ակտիվացում
Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ	Պատճառահետևանքային կապի ակտիվացում
Ի՞նչ կապ կարող է ունենալ նախորդ նյութի հետ	Նախկինում ձեռք բերված գիտելիքների ակտիվացում
Պատասխանեք՝ ինչու՞	Վերլուծություն, համադրում
Ո՞րն է իմաստը	Վերլուծություն, համադրում, ընդհանրացում
Ինչու՞ է կարևոր	Նշանակության վերլուծություն
Ի՞նչ տարբերություն կա	Համեմատում, հակադրում
Ինչո՞վ են նման	Համեմատում, հակադրում
Ի՞նչ հակափաստարկ կարելի է բերել	Հակափաստարկ
Ինչպե՞ս է հնարավոր լուծել խնդիրը	Գաղափարների,սինթեզ,ընդհանրացում,համակարգվածություն
Հիմնավորեք	Փաստարկ

ԳԼՈՒԽ 2. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1. Պատմության դասին կիրառվող մեթոդներ և տեխնոլոգիաներ

«Պատմականորեն մտածելու համար սովորողներին պետք է իրենց վավերական (authentic) հարցերը ստեղծելու, տարբեր աղբյուրներ օգտագործելու, աղբյուրների ուսումնասիրության, ընթերցման և համատեքստի սահմանման համար անհրաժեշտ հմտություններին տիրապետելու, այլընտրանքային տեսակետները դիտարկելու, իրենց առաջադրած վարկածները հաստատելու և կասկածի տակ դնելու համար աղբյուրնել գտնելու, սեփական պատումը կառուցելու հնարավորություն տալ»:

ՌԻՈԲԻՆԳ

Քննադատական մտածողությունը մարդու ինտելեկտուալ գործունեության տեսակներից մեկն է: Այն նպաստում է նոր, իմաստալից հարցեր դնելու, ինքնուրույն, մտածված որոշումներ կայացնելու կարողությունների զարգացմանը:
Ի՞նչ է տալիս աշակերտին քննադատական մտածողության տեխնոլոգիան.

- ✧ տեղեկատվության ընկալման արդյունավետության բարձրացում
- ✧ աճող հետաքրքրություն ինչպես ուսումնասիրվող նյութի, այնպես էլ բուն ուսումնական գործընթացի նկատմամբ
- ✧ քննադատաբար մտածելու կարողություն
- ✧ սեփական կրթության համար պատասխանատվություն ստանձնելու ունակություն
- ✧ ուրիշների հետ համագործակցելու ունակություն
- ✧ կրթության որակի բարձրացում
- ✧ ողջ կյանքի ընթացքում սովորող մարդ դառնալու ցանկություն ու կարողություն:

Ի՞նչ է տալիս ուսուցչին քննադատական մտածողության տեխնոլոգիան.

- դասարանում բաց և պատասխանատու համագործակցության մթնոլորտ ստեղծելու ունակություն
- ուսուցման արդյունավետ մեթոդների համակարգ օգտագործելու ունակություն, որը նպաստում է ուսուցման գործընթացում քննադատական մտածողության և անկախության զարգացմանը
- դառնալ արժեքավոր մասնագիտական տեղեկատվության աղբյուր այլ ուսուցիչների համար:

Կարևոր է նաև աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացումը պատմության դասավանդման ընթացքում : Աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց են տվել,որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս,որոնք պահանջում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն: Աշակերտները ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին,որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի,երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը,գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը,վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը,ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով,հիմնավորված դատողություններ անել,գնահատել փաստերն ու երևույթները:Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ,քանի որ քննադատական մտածողությունը մտածողության այնպիսի համակարգ է,որն օգտագործվում է հենց փաստերի ու երևույթների վերլուծության համար,հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել,հիմնավորված գնահատականներ տալ,մեկնաբանել,կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ուսուցման գործընթացը կազմակերպվում է եռամակարդակ կառուցվածքով.

Խթանման փուլ

Այս փուլի ընթացքում ակտիվանում են սովորողների նախկին գիտելիքները, արթնանում է հետաքրքրությունը թեմայի նկատմամբ, որոշվում են առաջիկա ուսումնական նյութի ուսումնասիրման նպատակները:

Խթանման փուլում իրականացվող հիմնական գործառույթներն են.

ա/ մոտիվացիա (նոր տեղեկատվական նյութի հետ աշխատելու մոտիվացիա, թեմայի նկատմամբ հետաքրքրության խթանում)

բ/ տեղեկատվություն (թեմայի վերաբերյալ առկա գիտելիքների թարմացում)

գ/ հաղորդակցություն (գաղափարների, կարծիքների առանց կոնֆլիկտների փոխանակում) :

Խթանման փուլում օգտագործվող մեթոդական տեխնիկան.

- Մտագրոհ
- ԳՈՒՍ
- Զարմանք,անսպասելիություն
- Հիմնաբառի գուշակման պատմություն
- Հասկացությունների շարք (անհրաժեշտ է որոշել շարքերի կառուցման սկզբունքը, գտնել լրացուցիչ հայեցակարգ կամ մեկ ընդհանրացնող հայեցակարգ):
- Հայեցակարգային անիվ
- Մեջբերումներ

  Իմ փորձը ցույց է տալիս, որ նախընտրելի է աշխատանքը սկսել տեսողական աղբյուրներից (լուսանկար, ծաղրանկար և այլն), որոնք ավելի գրավիչ են սովորողների համար և յուրօրինակ «խայծ» են հանդիսանում՝ աշխատանքի հանդեպ հետաքրքրություն և ներգրավվածություն ապահովելով: Դրանից հետո անցում է կատարվում գրավոր աղբյուրներին, որոնք երբեմն համադրվում են տեսողական աղբյուրների հետ: Այստեղ շատ կարևոր է ուսուցչի համբերատարությունը և յուրաքանչյուր աշխատանքի համար տրամադրված մանրամասն հետադարձ կապը՝ սովորողի կատարած աշխատանքի ուժեղ կողմերի շեշտադրմամբ և զարգացման ենթակա կետերի և ուղիների սահմանմամբ: Բոլոր փուլերում կարևոր են **գրավոր վերլուծությունների** հանձնարարումը:

« Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի /ԳՈՒՍ/»

Դասի սկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ,որի ձախ սյունակում գրում է՝ **գիտեմ**,կենտրոնում՝ **ուզում եմ իմանալ**,աջ սյունակում՝ **սովորեցի** բառերը:Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի մասին:Ապա լրացվում է **գիտեմ** սյունակը:Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այս թեմայի մասին:Եվ վիճահարույց մտքերն ու հարցերը լրացնում է **ուզում եմ իմանալ** սյունակում:Դասի վերջում լրացվում է **սովորեցի** սյունակը:
Այս տեխնիկան արդյունավետ է նաև դասի կշռադատման փուլի համար,քանի որ այն թույլ է տալիս մտածել: Օրինակ՝ 6-րդ դասարանի հայոց պատմության դասը՝ «Հայ –հռոմեական պատերազմները» թեմայով, դասի նպատակը սահմանելուց հետո օգտագործված աղյուսակը կարող է ունենալ հետևյալ տեսքը.

Գիտեմ	**Ուզում եմ**	**Սովորեցի**
Ով էր Տիգրան Մեծը, Արածանի ճակատամարտի պատմական նշանակությունը:	Տիգրան Մեծի և Գնեոս Պոմպեոսի կնքած Արտաշատի պայմանագիրը,որի համաձայն Տիգրան Մեծը հրաժարվեց իր գրաված արտաքին նվաճումներից:	

«Հայեցակարգային անիվ»

Աշակերտները պետք է ընտրեն բառի հոմանիշներ, որոնք գտնվում են «հայեցակարգային անիվի» հիմքում և գրեն անիվի հատվածներում: Օրինակ՝ «XIX դար 60-70-ականների բարեփոխումները» թեմայից ընտրում ենք «Բարեփոխում» բառը և գրում հոմանիշները



«Հասկացությունների շարք»

Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ 7-րդ դասարանի հայոց պատմություն առարկայի՝

«Վարդանանց պատերազմը» թեմայի խթանման փուլում առանձին թղթերի վրա գրել «կռիվ», «պատերազմ», «տարակարծություն», «անհամաձայնություն» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը,որը միավորում է այս բառերը: Պատասխանը կարող է լինել՝ «կոնֆլիկտ»:

«Զարմանք,անսպասելիություն»

Երեխաները սիրում են զարմանալ:Անսպասելի,զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը:Հետևաբար դասը անսպասելի հարցերով սկսելը,որը նաև խթանում է մտածողության հմտությունների զարգացմանը շատ կարևոր է:Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը:Օրինակ՝ ի՞նչ կլիներ,եթե Սևրի պայմանագիրը կյանքի կոչվեր ,կամ պատկերացրեք դուք Անդրանիկ Օզանյանն եք :Ինչպե՞ս կվարվեիք:
Այս մեթոդը կարելի է կիրառել նաև կշռադատման փուլում:

Իմաստի ընկալման փուլ

Իմաստի ընկալման փուլը աշակերտների կողմից նոր գիտելիքների յուրացումն է և դրանց հետ աշխատելը: Քննադատական մտածողության զարգացման դասերին ուսուցչի դերը համակարգող է: Հետևաբար այս փուլում ուսուցչի հիմնական խնդիրն է պահպանել աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ: Միևնույն ժամանակ, կարևոր է ուղղորդել երեխաների գործունեությունը՝ ընդգծելով հին և նոր գիտելիքների կապը: Նման դասերին սովորողները պետք է հնարավորինս ակտիվ լինեն: Նրանք պետք է կարդան, լսեն, գրեն, կատարեն առաջադրանքներ, նշումներ անեն և այլն: Ուստի շատ կարևոր է փոխարինել աշխատանքի տեսակները՝ համատեղելով անհատական և խմբային աշխատանքի ձևերը:
Իմաստի ընկալման փուլի հիմնական գործառույթներն են.
ա/Տեղեկատվություն /աշակերտները ստանում են նոր տեղեկատվություն, աշխատում դրա հետ՝ ընկալելով և վերլուծելով, գնահատելով և համեմատելով արդեն ունեցած գիտելիքների հետ:

բ/Համակարգում.../այս փուլի բոլոր տեխնիկաներն ուղղված են նրան, որ սովորողները ոչ միայն յուրացնեն նոր գիտելիքները, այլև կարողանան համակարգել այն, այսպես ասած, «դասավորել»իրենց հիշողության մեջ:

Իմաստի ընկալման փուլում օգտագործվող մեթոդական տեխնիկան.

- ✓ Աշխատանք պատմական տեքստի հետ
- ✓ Կենտրոններով աշխատանք
- ✓ «Առաջ-Հետո» /«Կանխատեսում»/
- ✓ Վերնագրում
- ✓ «Բլումի երիցուկ»
- ✓ Ֆիլմի ցուցադրություն
- ✓ «Կանխատեսում»

«Առաջ-Հետո»

Այս տեխնիկան ձևավորում է՝ իրադարձությունները կանխատեսելու ունակություն, հայտնի և անհայտ փաստերը փոխկապակցելու, համեմատելու և եզրակացություններ անելու ունակություն. Երկու այունակների աղյուսակում լրացվում է «Առաջ» մասը, որտեղ աշակերտը գրում է իր ենթադրությունները դասի թեմայի, խնդրի լուծման վերաբերյալ և կարող է գրել վարկած: Դասի վերջում լրացվում է «Հետո» մասը, երբ ուսումնասիրվում է նոր նյութ, ընթերցվում է տեքստ և այլն: Օրինակ՝ «Ինչո՞ւ Խորհրդային բանակը հաղթեց 1945 թվականի Հայրենական մեծ պատերազմում» հարցը:

«Մինչև» կարծում եմ, որ ռուսական բանակն ավելի լավ էր զինված, բանակը տաղանդավոր գեներալներ ուներ: «Հետո» աշակերտները թվարկում են Խորհրդային բանակի հաղթանակի բոլոր պատճառները. Արդյունք. Ես ճիշտ եմ (ոչ ամեն ինչում), քանի որ. «……»: Այսպիսով, իմաստի ընկալման փուլի հաջող իրականացման դեպքում աշակերտների մոտ հաջորդ փուլում աշխատելու հզոր խթան է առաջանում:

«Բլումի երիցուկ»

Վեց ծաղկաթերթ - վեց տեսակի հարցեր:

1.Պարզ հարցեր,որոնք պահանջում են միանշանակ պատասխաններ /ի՞նչ,որտե՞ղ,ե՞րբ և այլն/

2.Հստակեցնող հարցեր /սովորաբար սկսում են «Այսինքն՝ դու ասում ես, որ…», «Եթե ճիշտ եմ հասկացել, ուրեմն…» բառերով: Այս հարցերի նպատակն է երեխաներին հետադարձ կապ տրամադրել իր ասածների վերաբերյալ/

3.Գործնական հարցեր /Ինչպե՞ս է մեր սովորածը կապվում կյանքի հետ/

4. Գնահատող հարցեր /Ինչպե՞ս եք վերաբերվում այս թեմային/

5. Ստեղծագործական հարցեր /Ի՞նչ կանեիք, եթե իրավիճակն այսպիսին լիներ/

6.Մեկնաբանության հարցեր /ձեր կարծիքով, ո՞ր կարծիքներն են համապատասխանում իրերի գոյություն ունեցող կարգին/ Սրանք հարցեր են, որոնք ուղղված են իրադարձությունների միջև հարաբերությունների հաստատմանը: Այս տեխնիկան թույլ է տալիս ակտիվ պահել աշակերտին, իմաստավորելով կարդալ :

Վերարտադրում Սովորական	**Սովորական**	**Ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս**
Հասկացություն	Գնահատում	Արդյո՞ք ճիշտ եմ հասկացել
Կիրառում	Գնահատում	Ինչպե՞ս կարելի է կիրառել
Վերլուծություն	Բացատրական	Ինչու
Սինթեզ	Ստեղծագործական հարցեր	Ի՞նչ կլինի, եթե..
Գնահատում	Գնահատող	Ինչպե՞ս եք դրան վերաբերվում

«Կենտրոններով աշխատանք»

Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր:Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն,որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում,այնպես էլ պատահականության սկզբունքով/:

- հետազոտողների կենտրոն
- ստեղծագործողների կենտրոն
- գրավոր աշխատանքի կենտրոն
- բացահայտողների կենտրոն

Բացահայտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը,կատարում նշումներ,վեր հանում վերջինիս հիմնական միտքը,ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հետազոտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձփռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց,գրականություն,փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթաթել տեաստի վերաբերյալ:

Ստեղծագործողների կենտրոն Մասնակիցները տեքստի առանձնահատկություններից ելնելով,փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել,օրինակ՝ բեմականացում,պաստառի պատրաստում,նկարազարդում և այլն:

Գրավոր աշխատանքի կենտրոն Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք ՝ պահանջին համապատասխան :

«Կանխատեսում»

«Կանխատեսում» մեթոդը թույլ է տալիս մտածել անհայտ երևույթի մասին,փորձել տեսականորեն ձեռք բերել տվյալ երևույթի մասին գիտելիքներ,որոնք հետագայում հերքվում կամ հաստատվում են: Օրինակ,անգլիական հեղափոխությունը ներկայացնելիս մինչ վերջնարդյունքին հասնելը,աշակերտներին տրվում է հետևյալ հարցը. **«Ի՞նչ եք կարծում,ինչպե՞ս է ավարտվել հեղափոխությունը»:**

Աշակերտների կանխատեսումները լսելուց և գրի առնելուց հետո,շարունակել դասը և կատարել համեմատական վերլուծություն:

«Վերնագրում»

Աշակերտներին նոր դասը ներկայացնել առանց վերնագիրը հաղորդելու:Այնուհետև դասի վերջում առաջարկել վերնագրել դասը: **Կշռադատման փուլ:** Դասի այս փուլը ստացված գիտելիքների և հմտությունների ամրապնդման փուլն է,որի ընթացքում աշակերտները աշխատում են նոր տեղեկատվության հետ, կատարվում է ձեռք բերված գիտելիքների համակարգում, գնահատում, նոր գիտելիքների համեմատում արդեն հայտնիի հետ: Կշռադատման փուլի հիմնական գործառույթն է . տալ ստեղծագործական, հետազոտական կամ գործնական առաջադրանքներ՝ հենվելով ուսումնասիրված տեղեկատվության վրա: Կշռադատման փուլում օգտագործվող մեթոդական տեխնիկան.

- ✓ «Էսսեներ»
- ✓ «Վենի դիագրամ»
- ✓ «Տարբերակում»
- ✓ «Կլաստեր»
- ✓ «Անկյուն»

«Էսսեներ»

Այս մեթոդի էությունը ոչ միայն մտքերը գրավոր արտահայտելն է, այլև սեփական կարծիքը ուրիշների հետ կիսելը, ուրիշի տեսակետը լսելը: Դրանք պետք է ընկալվեն որպես մտածողության զարգացման և ընթերցանության մշակույթի ձևավորման միջոց:Կան 5 րոպեանոց էսսեներ, 10 րոպեանոց էսսեներ, ինչպես նաև ավելի երկար և աշխատատար էսսեներ: Քննադատության և լրագրության ժանր, ցանկացած գրական, փիլիսոփայական, գեղագիտական, բարոյական և սոցիալական խնդրի ազատ մեկնաբանություն: **10 րոպեանոց էսսե.** տեքստի ընթերցումից (լսելուց) և ընդհանուր քննարկումից հետո աշակրտներին առաջարկվում է կազմակերպել իրենց մտքերը՝ օգտագործելով 10 րոպեանոց էսսե (օգտագործելով ազատ գրելու տեխնիկան): Դա անելու համար ուսուցիչը 10 րոպե է խնդրում առաջարկվող թեմայի շուրջ գրելու համար:

5 րոպե տևողությամբ էսսե: Այս տեսակի գրավոր առաջադրանքը սովորաբար կիրառվում է դասընթացի վերջում՝ օգնելու սովորողներին համախմբել իրենց գիտելիքները ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Ուսուցչի համար սա արձագանք ստանալու հնարավորություն է: Ուստի աշակերտներին կարելի է առաջարկել երկու կետ.

1) գրել այն, ինչ սովորել են նոր թեմայի շուրջ.

2) տալ մեկ հարց, որի պատասխանը նրանք երբեք չեն ստացել:

«Վենի դիագրամ» Մեթոդ, որն օգնում է կատարել հասկացությունների, առարկաների, երևույթների համեմատական նկարագրություն: Տեքստը կարդալուց հետո աշակերոները լրացնում են աղյուսակը :

Ալեքսանդրապոլի պայմանագիր

1.Կնքվել է 1918թ.հունիսի 4-ին Հայաստանի յ Թուրքիայի միջյ: 2.Թուրքիային էր անցնում ոչ միայն Արդվինը,Կարսը,Արդահանը,Օլթին, Կաղզվանը,Ախալքալաքը,Ախալցխա ն,Ալեքսանդրապոլի յ Էջմիածնի գավառների երեք քառորդը,Երյանի գավառի կեսը,ՇարուրԴարալագազի մեկ հինգերորդ մասը: 3.Երկաթուղիների վերահսկողությունը անցնելու էր Թուրքիային: 4.Հայաստանը պարտավորվում էր կազմալուծել հայկական ազգային անկանոն զորախմբերը:

վերահսկողությունը անցնելու էր Թուրքիային: 4.Հայաստանը պարտավորվում էր կազմալուծել հայկական ազգային անկանոն զորախմբերը

Բաթումի պայմանագիր

1.Երկու պայմանագրերն էլ կնքվել են Թուրքիայի յ Հայաստանի միջյ յ ստորագրել է Ալ.Խատիսյանը: 2.Հայաստանը ունեցել է տարածքային կորուստներ: 3.Պայմանագրերը երկու երկրների կողմից էլ չեն իրագործվել

պայմանագիր

1.Կնքվել է 1920թ.-ի դեկտեմբերի2-3- ի գիշերը՝ Հայաստանի յ Թուրքիայի միջյ: 2.Հայաստանը Թուրքիայի պարտադրանքով հրաժարվում էր Սյրի պայմանագրից: 3.Թուրքիային էր անցնում Կարսի մարզը,Սուր,ալուի գավառը,Նախիջյանի մարզը: 4.Հայ-թուրքական պետական սահման դարձան Ախուրյան յ Արաքս գետերը:

«Տարբերակում»

Արդյունավետ մեթոդ , որը թույլ է տալիս ընդգծել հիմնականը նոր տեղեկատվության մեջ : Նոր նյութին ծանոթանալուց հետո սովորողները կազմում են հիմնական կետերի , դրույթների ցանկը : Այնուհետև իր ցանկի յուրաքանչյուր կետի դիմաց գնահատման է տրվում չափանիշներից մեկով՝ կարևորություն , անհրաժեշտություն և այլն :

«Կլաստեր»

Այս մեթոդի նյութը գրաֆիկորեն կազմակերպելու միջոց է , որը թույլ է տալիս պատկերացնել մտքի գործընթացները , որոնք տեղի են ունենում , երբ խորասուզվում են որո- շակի թեմայի մեջ , խթանում են նոր ասոցիացիաների առաջացումը կամ գրաֆիկորեն պատկերում են նոր գաղափարներ : Կաստերը մտածողության ոչ գծային ձևի արտացոլումն է : Երբեն այս մեթոդը կոչվում է «տեսողական ուղեղի փոթորիկ »: Կլաստերավորումը կիրառվում է ինչպես խթանման , այնպես էլ կշռադատման փուլում : Սա մանկավարժական ռազմավարություն է : Կլաստերավորումը շատ պարզ է և հեշտ է հիշել .

1. Թերթի կամ գրատախտակի մեջտեղում անհրաժեշտ է գրել բանալի բառ կամ նախադասություն , որը գաղափաի , թեմայի «սիրտն » է :
2. Քանի որ գաղափարներ են առաջանում , անհրաժեշտ է դրանց միջև կապեր հաստատել , բառերը միացվում են ուղիղ գծերով՝ առանցքային հասկացությամբ :
3. Արդյունքում ստացվում է մի կառույց , որը գրաֆիկորեն արտացոլում է մեր մտքերը, որոշում տվյալ թեմայի տեղեկատվական դաշտը :

Բանալի բառեր. ինֆորմացիա, քննադատական, ստեղծագործական մտածողություն, պատճառահետևանքային կապ, վերլուծություն, բաց հարցեր, գնահատում, ճանաչողություն:

Այս տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս ակտիվացնել աշակերտների գործունեությունը դասարանում:

Նրանք ավելի շատ հարցեր են տալիս, ավելի մտածված են կարդում դասագրքի տեքստը, ավելի լավ ընդգծում հիմնական մտքերը, կազմում կլաստերներ: Ամենակարևորը հասկանալն է, որ նոր կրթական մոտեցման իմաստը ոչ թե որոշակի տեխնիկայի ալգորիթմի խստիվ պահպանումն է, այլ դասավանդման նոր տեխնոլոգիաների կիրառմամբ աշխատող ուսուցչի և աշակերտների ազատ ստեղծագործությունը: Մեթոդը ներկայացված է օրինակում.

Դասի թեման՝ Հայոց մեծ եղեռն



2. 2. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ: ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ուսուցչի մասնագիտական կարևոր խնդիրներից մեկը դասի ճիշտ պլանավորումն է: Դասապլան կազմելու հիմնական նպատակն այն է, թե ինչպես օգնել աշակերտներին ուսումնական ակնկալվող արդյունքներին հասնելու համար: Դասապլանում արտացոլվում է հատկապես այն ամենը, ինչը կարևորվում է ուսուցչի կողմից, ընդ որում այնքան էլ էական չէ, թե ինչ ձևաչափով է արտահայտվում այն:

Դասապլան կազմելիս, նախևառաջ, անհրաժեշտ է դասի նպատակների և խնդիրների հստակ գիտակցում: «Ի՞նչ եմ ուզում, որ աշակերտները սովորեն» հարցադրման միջոցով ուսուցիչը փորձում է առանձնացնել այն հմտությունները, ընկալումները, փաստերը, արժեքները, որոնք նա ակնկալում է մատուցել տվյալ դասի ընթացքում: Նա նաև հստակեցնելու և առանձնացնելու է անմիջականորեն չափելի նպատակները ընդհանուր (հեռահար) նպատակներից:

Ուսուցիչը դասը պլանավորելու է այնպես, որպեսզի՝

օգնի աշակերտներին գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերել

- սովորեցնի սովորել,
- ուսուցման հիմնական բեռնվածությունն ընկնի աշակերտների ոչ թե հիշողության, այլ ակտիվ մտածողության վրա,
- ուսուցումը լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն:

Դասի պլանավորման հաջորդ քայլը դասի մատուցման եղանակի որոշումն է, այսինքն նպատակների իրականացման համար ռազմավարության մշակումը: Անհրաժեշտ է անմիջական և բացահայտ կապ ստեղծել ռազմավարության և հետապնդվող նպատակների միջև:
Շատ կարևոր է աշակերտների ակտիվ մասնակցությունն ապահովող մեթոդների ընտրությունը: Դրա լավագույն միջոցը համագործակցային ուսուցման և փոխներգործուն մեթոդների օգտագործումն է:
Դասի նպատակներից, դասարանի առանձնահատկությունից, ուսուցչի մեթոդական պատրաստվածությունից և այլ գործոններից կախված՝ ուսուցչի

հայեցողությամբ կարող են ընտրվել նաև ուսուցման ավանդական մեթոդներ, կամ կատարվել ավանդական և ժամանակակից մեթոդների զուգակցումներ: Դասի պլանավորման մյուս անհրաժեշտ քայլը գնահատման խնդիրների որոշումն է, դրա մեթոդների ընտրությունը: Գնահատումը կարող է կատարվել ուսուցմանը զուգահեռ, ինչպես նաև դասի տարբեր փուլերում, և ոչ միայն դասի վերջում, ինչպես արվում է սովորաբար: Դրա համար ավանդական մեթոդների հետ մեկտեղ կարելի է (և ցանկալի է) օգտագործել նաև գնահատման տարբեր այլընտրանքային մեթոդներ, ինչպես օրինակ՝ ինքնագնահատումը, խմբային գնահատումը, թղթապանակների վարումը և այլն, որոնք ուսուցիչն ընտրում է նպատակահարմարությունից ելնելով: Դասի պլանավորման համար կարևոր է նաև, որ ուսուցիչը նախապես բաշխի ժամանակը, մտածի անհրաժեշտ նյութերի, գործիքների, պիտույքների և առհասարակ ռեսուրսների մասին: Իսկ գլխավոր խնդիրներից մեկն այն է, որ ուսուցիչը դասի ընթացքը ներկայացնելիս հստակ պլանավորի ոչ միայն իր գործողությունները, այլև աշակերտների գործողությունները:

Այսպիսով, դասապլանի կազմումը և դրա իրականացումը կարելի է դիտել որպես մի գործընթաց՝ հետևյալ քայլերով.

1. նպատակի և խնդիրների ձևակերպում, աշակերտների և անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության հստակեցում,
2. անհրաժեշտ մեթոդների և հնարների ընտրություն, դասի ընթացքի, ուսուցչի և աշակերտների գործողությունների պլանավորում,
3. ուսումնառության ընթացքի և արդյունքների գնահատում:

Դասապլան կազմելիս հարկավոր է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

1. դասապլանում հստակեցված է լինելու նպատակը, սպասվող արդյունքները,
2. գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել դասի նպատակն ու խնդիրները,
3. դասապլանում նշված են լինելու դասի համար անհրաժեշտ ռեսուդասի ընթացքում հրահանգավորումը լինելու է հստակ և այն համապատասխանելու է աշակերտների ուսումնառության մակարդակին,

4.դասի ընթացքում հրահանգավորումը լինելու է հստակ և այն համապատասխանելու է աշակերտների ուսումնառության մակարդակին,
5.դասի ընթացքում աշակերտի գործողությունները հիմնականում ուղղված են լինելու դասապլանում նշված նպատակներին:

Փորձարարական դաս –1

Քննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով հետազոտության օբյեկտ ընտրել եմ մեկ դասարան որտեղ իրագործել եմ փորձարկում :Կատարել եմ գծային տիպի հետազոտություն,որով փորձել եմ պարզել ,թե մեթոդն որքան է արդյունավետ:Ուսումնասիրություններս գրականության ասպարեզում ցույց է տալիս որ,հարցադրումների մեթոդով հնարավոր է զարգացնել քննադատական մտածողություն :
Հետազոտության ընթացքն իրականացնելու համար ընտրել եմ հիմնական փոփոխականները: Անկախ փոփոխական հարցադրումներով ուսուցում
-Կախյալ փոփոխական
- Քննադատական մտածողություն
Հետազոտական գործընթացն իրականացնելիս հանդես եմ եկել որպես դիտարկող : Իրականացրել եմ մեկանգամյա դիտարկում ,հավաքագրել եմ ուղղակի և անուղղակի և միջնորդավորված տվյալներ:
Կիրառել եմ հետևյալ մեթոդները
1.դիտարկում
2.թեստավորում
Իրկանացրել եմ փորձարկում 2դաս
Արյունքները վերլուծել եմ ձևակերպել հետևյալ մեթոդներով :
Գրանցում
Համեմատում

Հետազոտության ընթացքը –Հետազոտությունը կատարել եմ Մասիս քաղաքի Թիվ 3 հիմնական դպրոցի 7^{Ա} -րդ դասարանում, որտեղ սովորում են 28 աշակերտ:Հետազոտական աշխատանքը կատարել եմ 2 դասերի շրջանակներում՝ <<Վարդանանց պատերազմը>>,<<Ավարայրի ճակատամարտը>>:

Դասերն անցկացնելիս իմ առջև դրել եմ մի քանի խնդիրներ դրանք են ,ընկալեն հաղորդվող նյութը ,կատարենք բաց առաջադրանքներ, որոնց միջոցով սովորողները կկարողանան աղբյուրների հիման վրա հարցադրումներ առաջ քաշել և զարգացնել:Կարողանան վերլուծել անցյալի շարադրանքը,բացատրել ,թե ինչու տվյալ իրադարձությունը զարգացնել հենց այդ կերպ:Կարողանան կառուցել պատճառահետևանքային փաստարկներ վերլուծական տարբերակումներով :

Այս դասի անցկացման համար ընտրել եմ մեթոդներ, ,հարցադրում , զրուց ,մտագրոհ : Նյութի բովանդակությունը սովորողներին հասցնելու , նրանց գործուն մասնակցությունը գիտելիքի ձեռքբերմանը ապահովելուև դասն արդյունավետ վարելու համար ուսուցման գործընթացում կիրառվելու են հետևյալ դիդակտիկ նյութերը՝նկարներ,օժանդակ նյութեր, քարտեզ,գծապատկերներ:

Դասարան մտնելուց հետո ուսուցիչը ունի մեկ ամենակարևոր քայլ՝ կոտրել սառույցը սովորողների և սովորեցնողի միջև: Այդ նպատակով ես սկսում եմ կարճ հարցերի միջոցով և խթանել նրանց հետաքրքրությունը, և ծանոթացնել դասի կառուցվածքին: Օրինակ հնչում են հետևյալ հարցերը.

-Տեսնենք ով՞ ավելի լավ կհիշի մեր նախորդ դասի կարևոր թվականներն ու առանցքային հարցերը:

-Այսօր ձեզ համար բացահայտումների օր է լինելու: Պատկերացնումու՞մ եք թե մենք այսօր ո՞ր քաղաքական ու հասարակական գործչի գործունեությանն ենք ծանոթանալու: Աշակերտներին ակտիվացնելուց հետո հնչում է հարց.–

Ո՞վ է կատարել տնային առաջադրանքները: Ի՞նչ հարցեր են առաջացել: Եթե հարցեր չունենտնային առաջադրանքները կներկայացնեն դասը պատասխանելու ընթացքում: Տնային հանձնարարությունները ստուգվում են ընթացիկ հարցերի միջոցով:

Այնուհետև <<Մտագրոհի >>միջոցով կարողանում եմ ապահովել բոլոր սովորողների ներգրավվածությունը, հասկանալ թեմայի յուրացման մակարդակը:Այնուհետև հրահանգում եմաշակերտներին մտածել մեկ հետաքրքիր դրվագ իրենց արտահայտած մտքի շուրջ:

Այնուհետև ԽԻԿ համակարգի միջոցով ուղղորդում եմ սովորողներին :

Մտագրոհ– դասը սկսվում է ակտիվացնող որևէ վարժությունով:Մտագրոհ ,կամ հարց ու պատասխանով:Դասի այս հատվածում աշակերտների ուշադրությունը հրավիրեցի այն հարցին. Արդյոք ճիշտ են համարում հայերի առերես զրադադաշտականությունը ընդունելը:Իսկ եթե չնդունեին ինչ կլիներ:Այս հարցադրումները պատահական բնույթ չունեին: Տրված հարցադրումները հստակ աղերս ունեին մեր հետազոտական թեմայի, այն է՝ բաց հարցերը նպատակ ունենալով՝ խթանել աշակերտների քննադատական մտածողության զարգացումը:

Իմաստի ընկալման փուլում ուսուցիչը ապահովում է՝

1. սովորողների հետաքրքրության պահպանումը՝մեջբերելով հայտնի պատմիչների խոսքերից

2. տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,ստուգիչ հարցերի միջոցով.

3. նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:Այնուհետև սահուն կերպով ներկայացնում եմ նոր դասը

4.հաղորդում է հիմնական տեղեկատվությունը նոր դասի վերաբերյալ ,բերումօրինակներ,ցույց է տալիս անցյալ դարերի և ներկայի տարբերությունը.

5.կատարում է մտքի քարտեզագրում՝ գրատախտակին որոշակի մեխանիզմներցուցադրելով :

Կշռադատման փուլ–անցկացվեց զրույց, որը օգնեց ամբողջացնել աշակերտի ստացած գիտելիքները դասից: Իմ կողմից օգտագործվեց նաև սովորողների ինքնուրույն մտածողության և երևակայության զարգացումը խթանելու համար քննարկման հարցը, և լսեցի աշակերտների հիմնավորումներն ու մեկնաբանությունները:

Հետազոտական աշխատանքն իրականացնելու, ինչպես նաև դրա չափողականությունն ապահովելու համար աշակերտներին տրվեցին հարցաթերթեր՝ բաղկացած 10 հարցից, որոնք բոլորն ունեին բաց բնույթ: Դասի ավարտին գնահատվեցին առավել ակտիվ աշակերտները, և տրվեց նոր տնային հանձնարարությունը: Ամփոփելով առաջին հետազոտական դասը կարելի է նշել, որ այն հաջողված էր,թիրախային խմբի աշակերտները կարողացան որոշ չափով վերլուծել խորքային հարցերը, դրանց հանգուցալուծումը գտնել: Աշակերտները կարողացան արտահայտել իրենց դիրքորոշումը թեմայի շուրջ: Ես իմ մոտ նշումներ արեցի, վեր հանեցի դասի դրական և բացասական կողմերը: Դասը հետաքրքիր էր,ժամանակի առումով կային որոշակի սահմանափակումներ: Աշակերտները ոգևորված արտահայտվում էին, համեմատում և վերլուծում: Հայրենասիրական ոգին բարձր էր, բոլորը քննարկում էին ազգային գաղափարներ:

Փորձարարական դաս 2

Հաջորդ դասը –«Ավարայրի ճակատամարտը»–ն էր : Դասանյութը ներկայացնելու համար իմ առջև դրել էի մի քանի նպատակներ, դրանք էին.
–իմանան Ավարայրի ճակատամարտը ,
–ի՞նչպիսի քայլեր էր Վ.Մամիկոնյանը ձեռնարկում ազգապահպանության համար,
–ինչպիսի՞ն էր նրա դիրքորոշումը,արդյո՞ք հիմա այդպես կվարվեինք և այլն:
–ներկայացնեն պատմական նշանակությունը ,
–Վասակ Սյունու և Վարդան Մամիկոնյանի դերը պատմության մեջ :
Դասի սկզբում առաջանում են հարցեր՝ ի՞նչ նոր բան են սովորելու տվյալ դասաժամին, ի՞նչ նոր բան են կարողանալու անել և իմանալ դասի վերջում:Դասի վերջնարդյունքը կլինի բավարարված, հագեցած գիտելիքներով և կարողություններով:Կբարձրանա սովորողների ինքնավստահությունը, նաև ձեռք բերված հմտությունները համադրելու լուրջ կարողություն ձեռք կբերեն:

Խթանման փուլում աշակերտները ներկայացնում են պատերազմի պատճառները: Դասը սկսում է կարճ հարցերի միջոցով և խթանելովնրանց հետաքրքրությունը, և ծանոթացնում է դասի կառուցվածքին: Աշակերտներին ակտիվացնելուց հետո հնչում է հարց.
Ո՞վ է կատարել տնային առաջադրանքները: Ի՞նչ հարցեր են առաջացել: Աշակերտները շահագրգռվածությամբ սկսում են վերհիշել նախորդ օրվա իրենցյուրացրած նյութը:Քննարկվում են առաջացած հարցերը, տրվում են սպառիչ պատասխաններ:
1.Աշակերտներին հետաքրքիր է դառնում դասի սպասվելիք բացահայտումները:Սովորողների հետաքրքրության պահպանումը՝մեջբերելով հայտնի պատմիչների խոսքերից
2. տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,ստուգիչ հարցերի միջոցով
3. նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի

ստեղծումը:Ուսուցիչը սահուն կերպով ներկայացնում է նոր դասը

4.հաղորդում է հիմնական տեղեկատվությունը նոր դասի վերաբերյալ ,բերում

օրինակներ,ցույց է տալիս անցյալ դարերի և ներկայի տարբերությունը: Ինչպե՞ս դուք կվարվեիք Վ.Մմիկոնյանի և Վ.Սյունու փոխարեն փոխարեն:
–Ո՞րը կլիներ ձեր որոշումը :
–Եթե հիմա լիներ նման իրավիճակ դուք ինչպե՞ս կվարվեիք:
Աշակերտները լսում են, ինֆորմացվում են, աշխատում են,պատասխանում են հարցերին, քննարկում են,արտահայտում են իրենց կարծիքը:
Կշռադատման փուլում ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին արժևորել,օգտագործել,կրիառել իրենց սովորածն ու յուրացրածը: Հնչում են հետևյալ հարցերը

–Ինչպիսի՞ն եք պատկերացնում հայրենիքը:

–Ինչպիսի՞ն կուզեք տեսնել ապագայում:

Եթե դուք Վարդան Մամիկոնյանը լինեի՞ք:

Որ արարքը ինչպե՞ս կգնահատեք:

ՈՒսուցիչը լուծում է իր առջև դրված խնդիրը՝ ճիշտ օգտագործել սովորողների ուժերը և հնարավորություն տալ նրանց կիրառելու ստացած գիտելիքները: Դասի ընթացքում կիրառվեցին մի քանի մեթոդներ, սակայն վերջնարդյունքին հասանք հարցադրումների մեթոդով:

Ամփոփելով երկրորդ հետազոտական դասը՝ կարելի է եզրակացնել, որ աշակերտների մոտ կային որոշակի դրական տեղաշարժեր: Դասի հիմնական նպատակները իրականացվեցին, աշակերտները գոհ էին և հագեցած:

Ըստ Ֆ. Գրոյսերի (1964)՝ հարցերը պետք է լինեն հասկանալի, բովանդակալից, հակիրճ, բնական ու պարզ լեզվով շարադրված, մտածելու տեղիք տվող և ներգրավող, «փաստային» և «մտածել ստիպող» հարցերի միջև հավասարակշռություն պետք է լինի: Աշակերտների համար հարցադրումներով զրույցը հետաքրքիր և հաճելի գործընթաց է, հատկապես քանի որ ճիշտ պատասխանները նրանց վստահության և հաջողության զգացողություն են պարգևում:

Ինչու ընտրեցի հենց դպրոցի 7-րդ դասարանը հետազոտական աշխատանք կատարելու համար:Որովհետև դնելով այս խնդիրը իմ առաջ՝ ցանկացա առաջնահերթորեն բարձրացնել աշակերտների քննադական մտածողության աստիճանը: Դասերի ժամանակ կիրառած բաց հարցերը և կիրառած բազմաթիվ մեթոդները միանշանակ ազդեցություն ունեցան երեխաների քննադատական մտածողության զարգացման գործում:

Հավելված 1- Դասապլան 1

Ուսուցիչ՝ Հերմիկ Ղազարյան Առարկա՝ Հայոց պատմություն Դասարան՝ 7

Թեմա՝	Վարդանանց պատերազմը	
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, աշխատանքային տետր, քարտեզ, գծակարգեր, նկարներ,	
Հիմնական հասկացություններ	Աշխարհագիր, Հազկերտ, Վասակ Սյունի, Ղևոնդ Երեց, Ավարայր, Տղմուտ	
Դասի նպատակը՝	Աշակերտները կիմանան՝ ϖ Ո՞վ էր Վարդան Մամիկոնյանը, Վահան Ամատունին ϖ Ով էր Հազկերտ 2-րդը , Ի՞նչ քաղաքականություն էր վարում ϖ Արտաշատի ժողովը ϖ Ավարայրի ճակատամարտը	
Գործողություններ (ժամ/ տևողություն)	Պլանավորած ՈւԳ ռազմավարություն –մտագրոհ, մտավոր փորձ –հարցադրումների մեթոդ –գծակարգային քննարկում –զրույց	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Վերջնարդյունքները	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
	Աշակերտը կկարողանա. • Նկարագրել իրավիճակըԱրևելյան Հայաստանում 5-րդ դարի 1-ին կեսին • Բացատրել Վարդանանց պատերազմի պատճառներն ու հետևանքները • Գնահատել Վարդան Մամիկոնյանի գործողությունները • Վերլուծել ճակատամարտի պատմական կարևոր հետևանքը	
	Աշակերտներին օժանդակելու համար պետք է՝ –Բացատրել հանձնարարությունը, –Շշրջել դասարանում, օգնել և կառավարել անհատական աշխատանքները, – Ամփոփել հիմնական մտքերը, – Հարցադրումներ:	• Հայ նախարարական համակարգը մարզպանական շրջանում • Պարսից գերիշխանության սաստկացումը • Արտաշատի ժողովը
Գնահատում	Անելու եմ միավորային գնահատում:	
Տնային հանձնարարություն	Աղյուսակի տեսքով ներկայացնել պատերազմը	

Հավելված 2- Դասապլան 2

Ուսուցիչ՝ Հերմիկ Ղազարյան Առարկա՝ Հայոց պատմություն Դասարան՝ 7

Թեմա՝	Ավարայրի ճակատամարտը	
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, աշխատանքային տետր, քարտեզ, գծակարգեր, նկարներ,	
Հիմնական հասկացություններ	Աշխարհագիր, Հազկերտ, Վասակ Սյունի, Ղևոնդ Երեց, Ավարայր, Տղմուտ	
Դասի նպատակը՝	Աշակերտները կիմանան՝ ϖ Ավարայրի ճակատամարտը ϖ Ավարայրի ճակատամարտի նշանանաբանը ϖ Պատմական նշանակությունը	
Գործողություններ (ժամ/ տևողություն)	Պլանավորած ՈւԳ ռազմավարություններ –Մտագրոհ, մտավոր փորձ –Հարցադրումների մեթոդ –Գծակարգային քննարկում –զրույց –տեսանյութի դիտում	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Վերջնարդյունք ները	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
	Աշակերտը կկարողանա. • Նկարագրել Ավարայրի ճակատամարտի կռվող կողմերի դասավորու • Գնահատել Վարդան Մամիկոնյանի դերը • Վերլուծել ճակատամարտի պատմական կարևոր հետևանքը	
	Աշակերտներին օժանդակելու համար պետք է՝ –Բացատրել հանձնարարությունը, –Շշրջել դասարանում, օգնել և կառավարել անհատական աշխատանքները, – Ամփոփել հիմնական մտքերը, – Հարցադրումներ:	• Հայ նախարարական համակարգը մարզպանական շրջանում • Պարսից գերիշխանության սաստկացումը • Արտաշատի ժողովը
Գնահատում	Անելու եմ միավորային գնահատում:	
Տնային հանձնարարու թյուն	Աղյուսակի տեսքով ներկայացնել պատերազմը	

PARA.TV
HAYASA

Հավելված 3-Դասապլան 3 Ուսուցիչ՝ Հերմիկ Ղազարյան Առարկա՝ Հայոց պատմություն Դասարան՝ 6Ա,Բ

Հետազոտություն եմ իրականացրել նաև 6-րդ դասարանի աշակերտների հետ, որտեղ սովորում են թվով 35 աշակերտներ, նպատակը՝ աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել ուսումնական գործընթացի նկատմամբ և զարգացնել քննադատական մտածողությունը:

Դասարանը՝

6-րդ դասարան

Ամիս-ամսաթիվ՝ Առարկան՝ Հայոց պատմություն Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Արտաշեսյան թագավորության կազմավորումը

Դասի նպատակը՝- Նպաստել Հայոց թագավորությունների անկախացման, Արտաշես արքայի գահակալության շրջանի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը:

-Նպաստել սովորողների՝ պատմական իրադարձությունները, երևույթները և դեպքերը ճիշտ գնահատելու, սեփական տեսակետները հիմնավորելու կարողությունների զարգացմանը:

-Ամրապնդել սովորողների հետաքրքրությունը սեփական ժողովրդի պատմության նկատմամբ:

-Նպաստել սովորողների հայրենասիրական և ազգային զգացմունքների ամրապնդմանը:

Վերջնարդյունքը

Կարողանա՝ -Ներկայացնել Արտաշես Ա-ի գահակալման ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները

-արժևորել իրավիճակը ճկուն կերպով օգտագործելու՝ Արտաշես ստրատեգոսի կարողությունը, որի շնորհիվ Հայաստանը վերականգնեց իր անկախությունը

-թվարկել բարենորոգումները, կատարած շինարարական աշխատանքները

Կատարել հաշվառում /1րոպե/

Անհրաժեշտ պարագաներ՝ ՏՏ, քարտեզ, դասագիրք

Մեթոդներ՝ Մտագրոհ, քառաբաժան, գծապատկերի կազմում

Դասի ընթացքը՝ դասը կազմակերպվում է ԽԻԿ համակարգով

Խթանում- /8-10րոպե/ Այս փուլի նպատակն է 1.բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները 2.Սովորողների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում, մոտիվացիա	Աշակերտներին հանձնարարվում է կատարել <>վարժությունը -գրատախտակին գունավոր կավիճներով ներկայացնել Հայաստանի վիճակը Ք.ա. 4-րդ դարի վերջին: Դիտում են տեսանյութ և քննարկել	Աշակերտները պատասխանում են՝ -Ով էր Հայաստանի վտանգավոր հարևանը Ք.ա. 3-րդ դարում: -Ովքեր են իշխել Կոմմագենեում Ք.ա. 3-րդ դարում: -Որտեղի կառավարիճներ նշանակվեցին Արտաշեսը և Զարեհը:	
Իմաստի ընկալում- /25րոպե/ Նպատակն է՝ 1. Նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը 2. տեղեկատվական ընկալման ինքնավերահսկման ապահովումը	Դասարանը բաժանվում է չորս խմբի, աշակերտները կատարում են<<Քառաբաժան >> վարժությունը	Ինչ տեղեկույթ ստացա	Դասի կարևոր մասը
		Ինչ զգացի	Արտաշես 1-ինի բնութագիրը
Կշռադատում-/10րոպե/ Նպատակն է՝ 1.հանրագումարի բերել սովորողի գիտելիքները 2.հանրագումարի բերել սովորողի գիտելիքները	Աշակերտներին հանձնարարվում է գծապատկերի տեսքով ներկայացնել հայկական չորս թագավորությունները՝ իրենց մայրաքաղաքներով:		



Գնահատում /Յրոպե/ –գնահատումը նախընտրելի է կատարել /Գործընկերների գնահատում /մեթոդով, սովորողները կգնահատեն միմյանց կատարած աշխատանքները: Այս մեթոդը թույլ է տալիս և ուսուցչին, և սովորողներին ճշտել, ուղղել իրենց վարքագիծը և կոմպետենցիաները:
Հանձնարարել տնային աշխատանք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ասենք, որ պատմության դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել քննադատական մտածողության հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք ավելացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Աշակերտը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս: Այսպիսով, քննադատական մտածողությունը երաշխավորում է սովորողներին յուրացնել կրթական չափորոշիչները և կրթությունը բարձր մակարդակի հասցնել: Աշակերտներրը հնարավորություն ունեն ինքնադրսևորվելու, և դա նպաստում է սովորելու մոտիվացիային: Միայն ուսուցման տարբեր մեթոդների գրագետ կիրառումը կստեղծի պայմաններ, որոնք կխրախուսեն աշակերտներին ձեռք բերել գիտելիքներ: Զարգացնել մտածողությունը, նշանակում է զարգացնել մտածելու կարողությունը, ձևավորել երեխային որպես անհատ և նրա մեջ զարգացնել պատրաստակամություն, ճկունություն, գիտակցություն, խնդիրներ լուծելու ունակություն, համառություն, իրենց սխալները շտկելու կարողություն: Հիմք ընդունելով դասի ընթացքում իմ՝ որպես ուսուցչի, դիտարկումները, ուղղորդող հարցերի և հետազոտական հարցադրումների պատասխանները՝ կարող ենք եզրակացնել, որ ընտրված միջամտությունն ունի սովորողների պատմական և քննադատական մտածողության զարգացման մեծ ներուժ:

Դա հնարավորություն է տալիս ձևավորելու և զարգացնելու, մասնավորապես՝ եզրակացություններ և որոշումներ կայացնելու հմտություն: Հենց պատմության ուսուցչի խնդիրն է՝ դասավանդելիս կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, մեթոդներ, հնարներ, զարգացնել սովորողների քննադատական, ստեղծագործական , իմացական ունակությունները և ապահովել դպրոցականների կայուն ու խորը գիտելիքները: Փորձարարական դասերն իրականացրել եմ 6-րդ դասարանում ՝ «Արտաշեսյան թագավորության կազմավորումը» թեմայով և 7-րդ դասարանում՝ «Վարդանանց պատերազմը»,« Ավարայրի ճակատամարտը» թեմաներով: Դասավանդելիս հատուկ ուշադրություն դարձրեցի բաց հարցադրումներին, որոնք նպաստեցին աշակերտների ներգրավվածությանը և մասնակցությանը դասին: Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է անել քննադատական մտածողության շնորհիվ: Այսպիսով, պատմության դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Աշակերտը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից, այսինքն՝ ուսուցման օբյեկտից, վերաճում է ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ուսուցման սուբյեկտի, ինքնուրույն որոշումներ կայացնողի: Իսկ դա էլ կյանքի հրամայական պահանջն է:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը պահանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռի աշակերտներին՝ խորհելու և անկաշկանդ ինքնարտահայտվելու:Դպրոց մուտք գործող նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադական մտածողության զարգացման տեսությունը: Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին: Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ աշակերտներն ընդգրկվում են դասապրոցեսի մեջ' մինչև նոր նյութի հաղորդումը (խթանում), նյութի մատուցման ընթացքում (իմաստի ընկալում) և նյութը յուրացնելուց հետո(կշռադատում): Դիպուկ է բնութագրված հետևյալ մտքում. «Քննադատական մտածողությունը մտածողություն է մտածողության մասին, երբ Դուք դատում եք՝ Ձեր մտածողությունը կատարելագործելու նպատակով» [1]: Կարելի է հավաստել, որ քննադատական մտածողությունն անձի հոգեմտավոր կարողությունների զարգացման, ինքնակատարելագործման, մտագործունեության ակտիվացման կարևոր գործոն է և ժամանակակից աշխարհում կրթության գերակայություն: Կրթության ոլորտում քննադատական մտածողության հմտությունների կարևորությունը շեշտադրվում է որպես կրթության ակնկալվող վերջնարդյունք:: Ինչպես նշում են Լևստիկն ու Բարտոնը. «Եթե դպրոցները նախապատրաստում են սովորողներին ժողովրդավարական հասարակությունում ակտիվ քաղաքացիության, նրանք չեն կարող անտեսել բանավեճերը և սովորեցնել նրանց կրավորական կերպով ընդունել որևէ մեկի պատմական մեկնաբանությունը:

1. Тягло А. В., Критическое мышление: проблема мирового образования XXI века // “Постметодика”, 2001, № 3 (35), с. 19-26.

Ժողովրդավարական հասարակության քաղաքացի լինելն ավելին է, քան դա» [1] : Հիմք ընդունելով դասի ընթացքում իմ՝ որպես ուսուցչի, դիտարկումները, ուղղորդող հարցերի և հետազոտական հարցադրումների պատասխանները՝ կարող ենք եզրակացնել, որ ընտրված միջամտությունն ունի սովորողների պատմական և քննադատական մտածողության զարգացման մեծ ներուժ: Դա հնարավորություն է տալիս ձևավորելու և զարգացնելու, մասնավորապես՝ եզրակացություններ և որոշումներ կայացնելու հմտություն:

1 .Levstik, L. C., Barton K. C., Doing history: Investigating with children in elementary and middle schools, London: Routledge, 2015, p. 10.

Օգտագործված գրականության ցանկ

1. Богатенкова Н.В., Муштавинская И.В. «Технология развития критического мышления на уроках истории и краеведения», Санкт - Петербургский университет педагогического мастерства, 2001

2. Власова Т.А. “Развитие критического мышления на уроках истории в старших классах”. // “Преподавание истории и обществознания в школе” - 2005 № 3.

3. Заир-Бек С.И., Муштавинская И.В. “Развитие критического мышления на уроке”. М., “Просвещение”, 2004г

4. Խաչատուրյան Ռ., Աշակերտների քննադատական մտածողության պատմության դասավանդման ընթացքում, ՇՊՀ գիտական տեղեկագիր, N1, Պրակ Բ., 2019:

5. Հարությունյան Գ., Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում, Ատենախոսության սեղմագիր, Երևան, 2014:

6. Պատմության դասավանդման մեթոդիկա, Հրանուշ Ղևոնդյան, Երևան մանկավարժ 2001 »

7. . Тягло А. В., Критическое мышление: проблема мирового образования XXI века // “Постметодика”, 2001, № 3 (35), с. 19-26.

8.org hy.wikipedia

9. Загашев И. О., Заир-Бек С. И. Критическое мышление: технология развития. – СПб : Альянс-Дельта, 2003, стр. 98

10.http://www.nwlink.com/~donclark/hrd/bloom.html

11. https://books.google.am/books/about/Classroom_questions.html?id=-uk8AAAAYAAJ&redir_esc=y

12. Аверьянов Л. Я. Социология: искусство задавать вопросы. Издание 2-е, переработанное и дополненное. Москва. Изд.-во “Москва” 998. 195 с.